ԵՀԽ ԵՎ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՍՍԵԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԴՊՐՈՑՈՒՄ

Նոյեմբերի 17-ին Բոսսեի էկումենիկ դպրոցում սկսվեց ԵՀԽ և Կաթոլիկ Եկեղեցու միջև համատեղ աշխատանքային խմբի հանդիպումը՝ համանախագահությամբ Նորին Սրբազնություն Նիֆոն միտրոպոլիտի (Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցի) և Նորին Սրբազնություն Մարտին արքեպիսկոպոսի (Կաթոլիկ Եկեղեցի):

Հանդիպման ընթացքում մասնակիցներն անդրադառնալու են աշխատանքային խմբի օրակարգի հարցերին, որոնք վերաբերում են էկումենիկ փաստաթղթերի ընդունման գործընթացներին, էկումենիզմի հոգևոր ակունքներին, միգրացիայի և երիտասարդության հարցերին:

Մասնակիցները նաև այցելեցին ԵՀԽ և ծանոթացան ԵՀԽ գործունեությանը՝ հանդիպումներ և քննարկումներ ունեցան ԵՀԽ ծրագրերի պատասխանատուների և աշխատակիցների հետ: Այդ օրերին հանդիպումներ տեղի ունեցան Շվեյցարիայում պապական նվիրակ Սիլվիանո արքեպս. Թոմասիի, Շամբեզիի Ուղղափառ կենտրոնի պաշտոնեության հետ, մասնակիցները այցելցին Ռեֆորմիստական Եկեղեցու կենտրոն, ինչպես նաև Գրանդշոնի Ռեֆորմիստական վանք:

Հանձնախմբում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի թեմական պատվիրակ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ նոյեմբերի 17-22-ի լիագումար նիստին անձնափոխանորդի կարգավիճակով մասնակցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ